

ՊՈԼԻՎԻՆԻԼԱՑԵՏԱՏԱՅԻՆ ԷՄՈՒԼՍԻԱ ԵՎ ԲՈՒՏԱՖՈԼ ՊՈԼԻՎԻՆԻԼԲՈՒՏԻՐԱԼԱՅԻՆ ԹԱՂԱՆԹ

Լ. ՇԱՂԳԱՄՅԱՆ

Պոլիվինիլացետատային էմուլսիան որպես սոսնձող կիրառվում է պոլիպրոպիլենային արդյունաբերության մեջ և որպես կպցնող նյութ՝ կաշվի փոխարինիչների արտադրության մեջ: Այն հանդիսանում է վինիլացետատի պոլիմերացման պրոդուկտ ջրային միջավայրում և էմուլգատորի ու ինիցիատորի ներկայությամբ: Ըստ արտաքին տեսքի, էմուլսիան սպիտակ, համ սերի նման մածուցիկ հեղուկ է: Չորանալիս առաջացնում է թեթևակիորեն օպալեսցենցող (ցրող) թաղանթ:

Թորարկվում է երկու մարկայի պոլիվինիլացետատային էմուլսիա՝ ՊՎԷ-15 և ՊՎԷ-33: Նրանք բնութագրվում են հետևյալ ցուցանիշներով:

Ցուցանիշներ	Չափման միավոր	Մարկա	
		ՊՎԷ-15	ՊՎԷ-33
Սոսնձորի պարունակությունը	%	2,0	2,0
Չոր մնացորդի պարունակությունը	%	50,0	58,0
Դիտարկվող ալկալի պարունակությունը չոր մնացորդի բաղադրության մեջ	%	14—18	33
Թթվայնության աստիճանը pH	—	4—5,5	4—5,5

Պոլիվինիլացետատային էմուլսիան հաջողությամբ կիրառվում է գրքի բրդենների կոնակները սոսնձելու համար, ապահովում է նրանց շատ պինդ կպչելը, և խիստ կրճատում բնական պայմաններում չորացնելու ժամանակը: Հոսքային մեթոդով աշխատելու դեպքում էմուլսիայի այդ հատկությունը հնարավորություն է տալիս հրաժարվել չորացման բարդ հարմարանքների կիրառությունից:

Երևանի «Պոլիվինիլացետատ» գործարանի կողմից թորարկվող պոլիվինիլացետատային էմուլսիան լայն կիրառություն կգտնի:



Երևանի «Պոլիվինիլացետատ» գործարանում յուրացված է «Բուտաֆոլ» նոր պոլիվինիլբուտիրալային թաղանթի արտադրությունը:

Բուտաֆոլ թաղանթը իրենից ներկայացնում է դիբուտիլսեբացինատի միջոցով պլաստիֆիկացված պոլիվինիլբուտիրալ: Բուտաֆոլը անհույն, կիսաթափանցիկ փափուկ պաստառ է: Թաղանթի մակերևույթը հարթ է, փայլուն կամ փայլատ, մանր շագրենի ձևի: Թաղանթի հաստությունը 0,5—1,3 մմ է:

Բուտաֆոլ պոլիվինիլբուտիրալային թաղանթըն ալրվում է մեղմ, ծխացող բոցով: Այրման դեպքում նա հալվում է: Թաղանթը փափկում է 30°C-ից բարձր ջերմաստիճանում, իսկ սառեցնելիս կոշտանում է:

Բուտաֆոլն ունի լավ ադհեզիա ցանկացած նյութի նկատմամբ, բարձր լուսակայունություն և լուսաթափանցիկություն, խզման և երկարացման բարձր դիմադրություն՝ տաք վիճակում մամլելիս: Բուտաֆոլ պոլիվինիլբուտիրալային թաղանթի տեսակարար կշիռը 1,03—1,07 է:

Ստորև բերվում են Բուտաֆոլ թաղանթի տեխնիկական ցուցանիշները:

Ցուցանիշներ	Չափման միավոր	Մարկա	
		«Ա»	«Բ»
Թաղանթի հաստությունը	մմ	0,5 ± 0,5	0,5 ± 0,5
Խզման ժամանակվոր դիմադրությունը	կգ/սմ ²	240	200
Հարաբերական երկարացում	%	150	150
Ադհեզիա սիլիկատային ապակու նկատմամբ	կգ/սմ ²	80	70
Թաղանթի 1 մմ հաստության լուսակլանումը տրբայլքսում	%	1,7	2
Թաղանթի 1 մմ հաստության գունավորությունը			
ա) մինչ տաքացումը	աստորոն	0,6	1,0
բ) տաքացումից հետո	»	0,8	2,0
Սառնակայունությունը՝ —60 ± 20°C-ի դեպքում	ժամեր	6	—

Բուտաֆոլ պոլիվինիլբուտիրալային թաղանթը օգտագործվում է որպես սոսնձող շերտ անբեկոր ապակիներ՝ տրիպլեքսներ պատրաստելիս: